

կար իմ այս է: Եւ հողովս հիւանդ եմ ի խոցմանէ սատանայի, եւ մարմնովս արկար եմ ի խոցմանէ հրեզն սրոյն Աստուծոյ, որ մահատարածամ է անմեղ աղայոցս. աչքս կուրացել է ի բազում լալոյս, մէջքս կոտորել է, ձեռս թուրացել է, զի իմ մէկ սրղին Մխիթար զսղորմելի հայրս սեւեց յայս աւուրքս, եւ ես մնացի անխշատակ» (Յիշ. ԺԷ.):

1471ին, Արճէշ, կը գրէ Աւետարան մը եւս՝ Ծերունի եւ անոր կնոջ Ուսլու-Մեղքի համար, որոնք Աւետարանը կը նրւիրեն Խժիշկ զիւզի Սր. Ստեփանոս Նախավկայի եկեղեցւոյն (Յիշ. ԺԸ.):

1472ին կը գրէ Մաշտոց մը Գանձարան Տէր Գրիգոր քահանայի համար, միշտ Արճէշ (Յիշ. ԺԹ.):

Իսկ 1474ին, Աւետարան մը, դարձեալ անդ, նորընծայ Տէր Կարապետ Եպիսկոպոսին համար (Յիշ. Ի.):

1476ին Վան գրուած ձառընտիրի մը մէջ (Նոր Զուգայ, թիւ 544) Ագարիա գրծոյ կը յիշէ «... միւս վարդաբին իմոյ տէր Յովանիսին Արճըշեցոյն, որ Մանգասարենց կոչի...»:

1479ին, Աւետարան մը եւս, նոյնպէս անդ, որուն գրչութեան տան կ'երեւի թէ նոր մահատարած մը մանուկներուն մէջ նախճիր կը սփռէր: Կ'աւարտէ գրչութիւնը «ի դառն եւ ի սարսափելի աւուրքս, որ կայ ի միջի մերում սուրն աստուածային եւ խոցող կանմեղ աղայքս. խոցեալքն մեռանին եւ ալլքն ահարեկ լինին, լան եւ արամին, ոչ հաց ուտեն եւ ոչ ջուր ըմպեն: Եւ խոցեալքն զան լալով եւ կաղալով առ մայրն եւ անկանի ի գիրկս մօրն եւ ասէ. Ո՛վ քաղցրիկ ծնօղ, մեռանելոյ խոցեցայ, թէ ճար գիտես՝ արա, միթէ ոչ բաժանիմ ի ձեզանէ: Եւ սղորմելի ծնօղն ալլէր, խորովէր, եւ ճար չգիտէր: Եւ ապա աղայն թաւալէր եւ հոգեվարէր, եւ կու:ելով եւ կանչելով զհօղին հանէր, եւ լալի եւ սղորմելի ծնօղքն գոչէին, գոռային եւ հառաչէին, Վա՛յ որդի, կանչէին եւ ուշաթափեալ կենդանոյն մեռանէին: Եւ ո՞ր լեզու կարէ պատմել զխեղճ մեռանել աղայոցն եւ զայրել եւ զխորովել ծը-

նօղացն»: «Յայն սարսափելի աւուրքս լալոս աչօք գրեցի սուրբ Աւետարանս» (Յիշ. ԻԱ.):

Յովհաննէս Մանգասարենց այսպէս սրտաշարժ եւ աղեխարշ տողերով կը գրէ, կը նկարագրէ, մանուկներու մէջ ինկած այս խոցամահը, որուն անտարակոյս զոհ կ'զան նաև իր որդիները, քանի մը տարի առաջ: Սրտաճմլիկ սոսկմաններու տակ՝ այս մահատարածամը, կ'երեւի թէ մեծ աւերներ գործած է տեղւոյն բնակչութեան մէջ:

1479էն մինչեւ 1485, իրմէ գրչագիր ծանօթ չէ մեղի. սակայն, անտարակոյս, ան բազմաթիւ գրչութիւններ կատարած է:

1485ին, Մաշտոց-Գանձարան մը եւս կը գրէ, անդ, Տէր Ալեքսանոս քահանային համար, որ Վրաստանէն (վրացտանէցուն) էր: Եւ կ'աւելցնէ. «Եւ խոչորութեան անմեղազիր լերուք, զի կար մեր այս էր: Եւ զի Հ (70) տարոյ եմ» (Յիշ. ԻԲ.):

\* \* \*

Յովհաննէս Մանգասարենց ունեցած է աշակերտներ, որ ո՞նց մէ կը յիշուին, 1467ին, «մեղաւոր եւ անարժան Կիրակոս երէցն՝ որ մականունն Զողջկանց ասի»: Ան Բաղէշի Հինդ Խորանաց եկեղեցւոյն հովանիին տակ կը սկսի, եւ Ալթամարի Ս. Խաչին մէջ կ'աւարտէ թիւ 273 ձառընտիրը, Նօտարք Հայոց յիշատակարաններուն: Կիրակոս երէց կը խնդրէ յիշել «եւ զուսուցիչն իմ զՅովաննէս քահանայն զՄանգասարենց»:

Երկրորդ աշակերտ մը, Յովհաննէս քահանայ, որ 1486ին կը գրէ Մաշտոց մը (Էջմիածնի նոր հաւաքման թիւ 104), եւ 1489ին կը գրէ Աւետարան մը, «ի Քաջրերունի յԱրճէշ, ի Սոսկոն զիւզ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի», եւ կը խնդրէ յիշել «զուսուցիչն գրչիս՝ տէր Յովաննէս Մանգասարն» (Թորոս Աղբար, Բ. մաս, էջ 437):

Իսկ հոս գործածուած Յիշատակարաններուն թիւ Ա.ին մէջ տեսանք՝ որ իր Զա-